գլխավորապես խաշնարածությամբ պարապող բնակիչները որոնում էին թե իրենց՝ և թե՛ իրենց հոտերի համար կարճատև ձմեռվա ամիսներին ժամանակավոր ապաստարան։ Այսօր էլ այդ գյուղակներում բնակարաններից մի խոշոր մասը կառուցված են անփույթ կերպով և ամառը դատարկ մնալով՝ քայքայվում են և աշնանը խնամքով չեն նորոգվում։ Մինչդեռ այնտեղ, որտեղ թուրք բնակչությունն ավելի ազատ հրապարակների վրա, առավելապես Սիսիանում Եռաբլուր (Ուչթափալար) սարահարթի վրա և Կապանի հանքավայրերի մերձակայքում, ավելի շուտ է անցել հողամշակության, շենքերն ավելի հաստահիմն են, մառաննէրին, մարազնէրին և գոմէրին հատկացված է ընդարձակ տեղ և ներքին սարքավորումն էլ ավելի է ենթարկված հողագործ հայ հարևանության ազդեցությանը։

Բնորոշ է, որ թուրք բնակչությունն արդեն XIX դ. սկզբներին վաղուց կորցրած էր իր նախկին, միջինասիական ծագման մասին հիշողությունը և իրեն համարում էր հնուց բնիկ տեղական ժողովուրդ։ Խախտված էին նաև նրանց վաղեմի ցեղակցական կապերը։ Թեև այսօր էլ Կապանում և Սիսիանում մի քանի թուրք գյուղեր իրենց համարում են Սուֆլուների ցեղից, իսկ Գեղվա ձորում՝ Դարզալիների և Սարալիների կամ Բասուտի հովտում՝ Բաղարլիների ցեղից առաջացած, սակայն արդեն XIX դ. երկրորդ կեսում այդ ցեղակցական մերձավորությունից ոչ մի ցեղական միացող սրբություն կամ ցեղական տոնի հիշատակ, ցեղակցական պարտականությունների ոչ մի մնացորդ, բացի այն բանից, որ միևնույն ցեղական ծագում ունեցող սարվորները տակավին աշխատում էին սարում իրենց օբաները խփել իրարից ոչ հեռու։ Նախորդ ժամանակաշրջանում տեղի ունեցած փոխադրությունները՝ Արաքսի այս և այն ափը, Նախիջևանի կողմերից Զանգեզուրի լեռնաշղթայով արևելք և կրկին ետ, Մուղանի դաշտից, անջատ-անջատ մանր խմբակցություններով, առանձին-առանձին առաջնորդների ղեկավարությամբ, վաղուց խախտել ու կտրել էին ցեղակցական կապերը, որոնց վերականգնելու համար արդեն բացակայում էին նպաստավոր պայմաններ։

Ցեղակցական կապերի քայքայումը պիտի որ որոշ չափով մեջտեղից վերացներ այն միջնորմներից մեկը, որոնք բաժանում էին թուրք բնակչությանը հայկականից, որը վաղուց ապրել մոռացել էր տոհմատիրական ցեղապետական կարգերը։ Սակայն գյուղայնացման, ձմեռանոցներից գյուղերին, ֆշվոr անասնապահությունից նստակյաց հողամշակությանն անցնելու պրոցեսի դանդաղությունը և ուշացումը ուժեղ խոչընդոտ էին հանդիսանում երկու ազգությունների մերձեցման համար։ Հաղորդակցության գլխավոր ճանապարհներից մեկուսացած, Գանձակի նահանգի ամենից ավելի կենտրոնական իշխանության աչքից հեռացած գավառում, Զանգեզուրում շատ ավելի, քան թե Անդրկովկասի մի այլ մասում, որքան էլ արդեն ավելի քան վեցդարյան հարևանությունն իրար մերձեցրած լիներ երկու ազգություններին, այնուամենայնիվ նրանց տնտեսական ապրելակերպի տարբերությունն այնպիսի հակասություններ էր առաջացնում, որոնք սրում էին նրանց փոխհարաբերությունները, քանի որ սար բարձրացող և սարից իջնող թուրք ֆշվորնէրն, անցնելով հայկական, ինչպես և արդեն հողագործության անցած թուրքական գյուղերի արտերի և այգիների միջով՝ մեծ վնասներ էին պատճառում վերջիններին։ Պետության կողմից շատ թույլ և սակավարդյուն միջոցներ էին